ՎԱՀԱՆԱՎԱՆՔԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (1966—1970 թթ.)

Դ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության նախաձեռնությամբ և միջոցներով 1966 թ. ամռանից սկսվել են հայ հարտարապետության մեծարժեք կոթողներից մեկի՝ Վահանավանքի մաքրման և բարեկարգման աշխատանքները։ Այդ աշխատանքները իրագործում է Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Կապանի հնագիտական ջոկատը, որը հինգ տարիների կանոնավոր պեղումների ընթացքում հայտնաբերել է պատմա-հնագիտական կարևորություն ներկայացնող բազմաթիվ նյութեր և վիմագիր արձանագրություններ, որոնք առաջին անգամ դրվում են գիտական շրջանառության մեջ։

Հայտնի է, որ IX դ. վերջին քառորդին Հայաստանում վերականգնվում է հարյուրամյակներ առաջ կորցրած պետականությունը։ Երկրի բազաբական և տնտեսական հարաբերությունների համակողմանի զարգացման համար ստեղծվում են բարենպաստ պայմաններ. աստիճանաբար վերականգնվում է բայբայված ժողովրդական տնտեսությունը, աշխուժանում և ծավալվում են առևտուրն ու արհեստները, վերելք է ապրում մշակութային կյանքը։

Այդ նշանակալից վերափոխումների ոլորտից, հարկավ, դուրս չէր մնացել նաև Սյունյաց աշխարհը, որի իշխանների բազաբական ու ռազմական հզորությունը այդ տարիներին վճռական դեր էր խաղում հայոց նորահաստատ արքունիքում։ Դրա կոնկրետ արտահայտությունը հանդիսացավ այն, որ 906 թ. Տաթևի վանքի ղեխավոր տաճարի՝ կաթողիկեի օծման արարողություններին՝ նավակատիքին, մասնակցում էին Հայաստանի քաղաքական և հոգևոր առաջնորդները՝ Սմբատ Բագրատունի թագավորը, Վասպուրականի իշխանաց իշխան Գագիկ Արծրունին, Սյունյաց դահերեց իշխան Աշոտը՝ իրենց դահակալ իշխաններով և ազատներով, հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին, Աղվանից կաթողիկոսը. երկրի բարձրաստիճան հոգևորականության և ավատականության ներկայացուցիչներ։

Հանդիսավոր արարողություններին ներկա էր նաև Սյունյաց Բազք գավառի իշխան Զաղիկը, որը, Տաթևից վերադասնալով իր դահանիստ կենտրոնը՝ Կապան, ավագ որդու՝ դահաժառանգ Ջանշերի հետ խորհում է իր տիրույթների սահմաններում կառուցել Տաթևի պես գեղատեսիլ ու բարձրարվեստ մի տաճար։ Սակայն իր հոր և ավագ եղբոր ցանկությունն ի կատար է ածում իշխանազուն Վահանիկը, որը Շատինի (Սղեղնաձորի շրջան), այնուհետև Երիցակի (Ղափանի շրջան) վանքերում ապաքինվելուց հետո վերադարձել էր իր հայրական օջախը՝ մենակյաց կրոնավորի սիստեմ տարազով։

Վահտնի անունով նորտկաուցյ վանքը կոչվեց Վահանավանք[1]։

Վահանավանքը գտնվում է այժմյան Ղափան (Կապան) քաղաքից 7 կմ դեպի հարավ-արևմուտք, Սիսի գետի աջ ափին, Շհարջիկ գյուղի հանդիպակաց անտառախիտ սարալանջի տափարակի վրա։

Առաջին գրավոր տեղեկությունները Վահանավանքի կառուցման վերաբերյալ պահպանվել են Սյունյաց տոհմիկ պատմիչ Սանփանոս Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսականս» աշխատության մեջ (գլ. ԽԴ)։ Սա. Օրբելյանի վկայության համաձայն դահակալ իշխան Զաղիկի կրտսեր որդի Վահանը, Բաղարերդ ամրոցի մոտ ընտրելով «տեղի մի հարթ և յոյժ ի ճահ», իր իշխանազուն եղբոր աջակցությամբ սկսում է կառուցել տաճարը՝ «Յոյժ գեղեցիկ հորինուածովք, զմբեթայարկ և նոսխորան, հաստահեղոյս և տաշածոյ վիմօքս»[2]։ Վանքի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին

---

1 Սանփանոս Օրբելյանի «Պատմութեան» տարբեր էջերում Վահանավանքը հիշատակվում է նաև «Յոհանու վանք» անվամբ (տե՛ս Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, գլ. ԽԴ, էջ 174—175, գլ. ԾԲ, էջ 210, գլ. ԾԸ, էջ 235, գլ. ԿԴ, էջ 254—255)։

2 Նույն տեղում, էջ 174։

Վահանը զարդարում է «Մեծամեծ և թագաւորական սպասուք»[3], 911 թ. ավարտելով մեծ տաճարի կառուցումը, նա առաջին հերթին աշխատում է ապահովել նորաստեղծ կրոնական օջախի տնտեսական հիմքը։ Բաղքի գահակալությունն ստանձնած ավագ եղբոր՝ Ջևանշերի հաճությամբ տեղի վանական միաբանությանը հատկացվում է «Զձորն գետովն (Ոխչի գետը — Գ. Գ.) յայս դեհն և յայն յանդաստանս և յայգեստանս վանիցն. և զլեռնակողմն մինչ ի վեր ծայր բարձրաւանդակին, ուր հօրանք հոտիցն լինէին և բնակեալ խաչանցն»։

Բուն Կապան քաղաքի սահմաններից վանքին տրվում է «Մինչ ի պատուար պարսպին Բաղակու քարի արտաքին որմոյն, որն ի լեռնէն սկսանի և Տանձափարախոյ[5] կողմանէն մեծ Բնաձորն, որ ի լեռնէն սկսանի և իջանէ ի գետն»[6]։ Վանքին են շնորհվում նաև շրջակա երեք գյուղերը՝ Շեկքոն[7], Աչաղուաղետը[8] և Արավայրը[9]։ Այս հսկայածավալ կալվածներից ստացվող եկամուտները ամբողջապես տրամադրվում են վանքի կրոնավորներին, որոնց թիվը պատմիչի վկայությամբ 100-ից ավելին է եղել։

Վահանավանքում բացվում է դպրոց, որտեղ ուսանելու են գալիս Բաղքի և Կապանի պատանիները։ Այստեղ է իր կրթությունը ստացել Հայաստանի ապագա կաթողիկոս Վահան Սյունեցին, որը «Սնեալ է ուսեալ ի մանկութենէ, վարժեալ աստուածային իմաստութեան ի սոյն տան, քահանայացաւ...»[10]։

Հիմնադիր Վահան Զագիկյանի մահից հետո վանահայրության պաշտոնը ստանձնում է նրա եղբորորդին՝ Վահան Ջևանշերյանը, որը եղել է իր ժամանակի ամենազարդացած կրոնական գործիչներից մեկը և մեծ դեր է խաղացել Բաղաց թագավորության հիմնադրման գործում։ Վահանավանքում առաջնորդելիս նա «Շինէ զմեծ աղօթարանն ի դրան եկեղեցւոյն վիմարդեան մահարձանօք... Շինէ և զեղեցիկ յօրինուածով զգաւիթ եկեղեցւոյն մեծամեծ քերածոյ վիմօք երեսուն կանգնոց չափ, կանգնէ կամար ի դրան վանիցն և ի վերայ (նորա) երկու խորան...»[11]։

Ատ. Օրբելյանի տեղեկությունների համաձայն Ջևանշեր իշխանի որդի Վահանն է կառուցել վանքի սեղանատունը, ինչպես նաև խմելու ջուր է բերել թրծած կավե խողովակներով։

958 թ. Անանիա կաթողիկոսի հաճությամբ Վահան Ջևանշերյանը ընտրվում է Սյունյաց նահանգի եպիսկոպոս։ Թեև Սյունիքի հոգևոր կենտրոնը այդ շրջանում նույնպես համարվում էր Տաթևի վանքը, սակայն Վահան եպիսկոպոսը միայն երբեմն էր լինում Տաթևում և ժամանակի մեծ մասը անց էր կացնում Վահանավանքում։ Կարելի է ենթադրել, որ նա Սյունիքի եպիսկոպոսական կենտրոնը ուզում էր տեղափոխել Վահանավանք, որը մտնում էր իր հոր՝ Բաղքի դահակալ իշխան Ջևանշերի տիրույթների մեջ։

Վահան եպիսկոպոսի այս ձգտումն, անշուշտ, պայմանավորված էր իշխան Ջևանշերի՝ հեռուն գնացող նպատակներով։ Ջևանշերը հետևելով Արծրունյաց իշխանական տան օրինակին, ինքն էլ էր ցանկանում դառնալ թագավոր և ոմեն կերպ նպաստում էր Սյունյաց եպիսկոպոսական աթոռի անջատական ձգտումներին[12]։ Թեև Ջևանշերին չհաջողվեց դառնալ թագավոր, սակայն նրա եպիսկոպոս որդին Անանիա Մոկացուց անմիջապես հետո[13], շուրջ 5 տարի (964—969) բազմեց Հայաստանի հայրապետական գահին։

Վահան Սյունեցու կաթողիկոսությունը, սակայն, ընդհատվեց նրանով, որ Անիի եկեղեցա-

---

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

5 Այժմյան «Տանձու լենջ» հողամասն է, գտնվում է Քաջարանի կոմբինատի պիոներական Համբարի մոտ։

6 Ստ. Օրբելյան, էջ 175։

7 Ենթադրվում է հանդիպակաց Շհարջիկ գյուղը։

8 Այժմյան Աչաղուն է՝ Շհարջիկի կողքին, Քաջարան տանող ճանապարհի վրա։

9 Արավայր գյուղի ավերակները գտնվում են Վահանավանքի հարավ-արևելյան կողմում, Զորաղբյուրի շուրջը։

10 Տե՛ս Ստ. Օրբելյան, էջ 175։ Հմմտ. Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, Երևան, 1962, հ. 5, էջ 17։

11 Ստ. Օրբելյան, էջ 175։

12 Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հ. 1, Երևան, 1958, էջ 90։

13 Ստ. Օրբելյանը ուղղակի նշում է, որ Անանիա Մոկացուց հետո դահակալել է Վահան Ջևանշերյանը. «Կացեալ ի կաթողիկոսութեան ամս հինգ» (Պատմութիւն, էջ 176), սակայն հայ կաթողիկոսների իր կազմած ցուցակում հիշատակում է, որ Վահան Սյունեցին կաթողիկոս է եղել

կան ժողովուրդ Աշոտ Ողորմածի ցանկությամբ գահընկեց արեց նրան՝ մեղադրելով քաղկեդոնականության մեջ։ 972 թ. Վասպուրականի Համազասպ Աբծրունու մոտ ապաստանած Վահան կաթողիկոսը վախճանվում է և թաղվում տեղի Զորու վանքում։ Մինչ այդ Սյունիքում Սմբատ գահընկեց իշխանը իրեն արդեն հռչակել էր Սյունիքի և Բաղքի թագավոր։ Վահանավանքի առավել ծաղկման համար բացվում էին մեծ հեռանկարներ։

Հարկ է նշել, որ Սյունիքի գահերեցության մեջ X դ. առանձնապես հզորացել էր Բաղքի գահակալությունը կապան իշխանանիստ կենտրոնով։ Ուստի պատահաբանված է այն պատմական իրողությունը, որ հենց այս դարաշրջանում X դ. 2-րդ կեսին առաջացավ Սյունյաց թագավորությունը։ Թեև վայոց ձորի նգեկիս գյուղաքաղաքը այնուամենայնիվ երբեք էլ չէր կորցրել իր քաղաքական ազդեցությունը, այնուամենայնիվ Սյունյաց Սմբատ I թագավորը իր արքունիքը հաստատեց Կապանում, քանի որ վերջինս շրջափակված էր բերդերի ամուր ցանցով, որոնց մեջ ռազմա-ստրատեգիական մեծ նշանակություն ունեին հատկապես Սյունյաց աշխարհի «հույս և ապավեն» հանդիսացող Բաղարերդը, նրան հանդիպակաց Բաղակու քարը, Գրհամա, Շլորուտի, Գեղիի և մյուս բերդ-ամրոցները։

Արքայանիստ քաղաքը պետք է ունենար նաև իր արքունական եկեղեցին և տոհմական դամբարանատունը։ Այդպիսին հանդիսացավ Վահանավանքը մասնավորապես Սյունյաց Վասակ թագավորի գահակալության վերջին շրջանում։ Սմբատ II-ի օրոք Վահանավանքը բուռն զարգացում էր ապրում, իսկ նրա եղբայր Գրիգոր I թագավորն ու կինը՝ Աղվանից արքայադուստր Շահանդուխտը Վահանավանքում սկսում են մեծամեծ կառուցումներ։

1086 թ. Շահանդուխտ թագուհին իր քույր Կատայի և ամուսնու մահից հետո Սյունյաց թագավոր դարձած Սենեքերիմ եղբոր աջակցությամբ Վահանավանքում կառուցում է ս. Աստվածածին կոչվող դամբարան-եկեղեցին, դավիթը և մի շարք այլ շենքեր։ Այդ առթիվ Շահանդուխտը եկեղեցու հարավային պատին, ներսի կողմից, փորագրել է տակիս հետևյալ արձանագրությունը, որ կարևոր ենք համարում մեջբերել ամբողջությամբ։

«Թ։ Շլե։ (1086) թվականիս ես Շահանդուխտ դուստր Սեւադայի Աղվանից թագաւորի եւ ամուսին Գրիգոր թագաւորի որդոյ Աշոտայ. վասն ոչ գոյոյ մեր ի միասին ժառանգ (ր)ստ մարմնոյ ես եւ թոյրս իմ Կատայս շինեցաք զսր. Աստուածածինս փոխարեն զթոց նորա. որչափ կենդանի եմք նմա կատարեն զսր. խորհուրդն եւ յետ այնորիկ զմեզ կցորդ արասցեն անմահ։ զնմանն Քրիստոս»[14]։

Վահանավանքը համարվել է նաև Աղվանից իշխանազունների տոհմական դամբարան։ Այստեղ են թաղված «Բաղում թագաւորք և թագուհիք Աղուանից և Բաղաց և բազում իշխանք փառաւորք Սիսական աշխարհիս»[15]։

Ստ. Օրբելյանը հանվանն նշում է, որ այստեղ են ամփոփված Սյունյաց Սմբատ II և Սենեքերիմ թագավորների աճյունները[16]։ Սրբ սելջուկյան հրոսակախմբերը Բաղարերդի պարիսպների տակ չարտենդորեն սպանում են Սենեքերիմ թագավորին, ապա «եկեալ մեծամեծացն և որդւոցն կոծ մեծ արարին ի վերայ և բարձեալ տարան ի սուրբ ուխտն Վահանու և անդ եդին ի շիրմի ընդ այլ թագաւորսն»[17]։

ընդամենը երկու տարի (էջ 366)։ Կիրակոս Դանձակեցու վկայությամբ՝ 967—969 թթ. (Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 403)։ Հայտնի է, որ մինչև 958 թ. Վահան Ջևանշերյանը եղել է Վահանավանքի առաջնորդ։ Ահա այդ վկայությունը. Անանիա կաթողիկոսը «Կացոյց եպիսկոպոսութեան Սիւնեաց զՎահան որդի Ջևանշերի, որ էր առաջնորդ մեծ ուխտին Վահանուվանքից» (Ստ. Օրբելյան, էջ 208)։ 958—964 թթ. նա գլխավորում է Սյունյաց Նահանդի եպիսկոպոսարանը։ Եթե ընդունենք, որ Վահան Սյունեցին դահակալել է մինչև 969 թ., ապա Ստ. Օրբելյանի «ամս. հինգ» վկայությունը պետք է համարել ընդունելի։ Բայց դրանով մենք հակասած կլիներ նախորդ պատմիչների տեղեկություններին։ Մեր կարծիքով Վահան Սյունեցին Նահանդի եպիսկոպոս է եղել ոչ թե 958—964 թթ. (Հ. Ութմաղյան, Սյունիքը 9—10 դդ., Երևան, 1958, էջ 277), այլ 958—966 թթ., այսինքն 8 տարի՝ Ստ. Օրբելյանի հիշատակած 6 տարվա փոխարեն։

14 Ա. Բ ա ր խ ո ւ դ ա ր յ ա ն, Դիվան հայ վիմագրության, Երևան, 1960, պրակ. 2, էջ 138։

15 Ստ. Օ ր բ ե լ յ ա ն, էջ 175։ Պետք է կարծել, որ Վահանավանքը սկզբնապես հանդիսացել է Զաքիկյանների տոհմական դամբարանը։

16 Նույն տեղում, էջ 233։

17 Նույն տեղում, էջ 235։

Անուշտ այստեղ են թաղված Սենեքերիմի որդիներ Սյունյաց Գրիգոր II թագավորը և նրա կրտսեր եղբայրներ Սմբատն ու Սևադան, որոնց անունների հիշատակությամբ Վահանավանքի պեղումների ժամանակ հայտնաբերվել են արձանագրված քարեր. նորագյուտ խաչքարերից մեկի վրա փորագրված է «Գրիգոր և զՍմպատիկ յիշա Քս. Ամ.»: Թեև արձանագրության թվականը եղծված է, սակայն հեշտությամբ կարելի է վերականգնել ոչ միայն թվականը, այլև բացահայտել երկու արքայազն եղբայրների՝ միևնույն խաչքարի վրա հիշատակվելու պատճառը։ Ստ. Օրբելյանը վկայում է, որ Գրիգոր II թագավորը և իր եղբայր Սմբատը մեռել են միևնույն տարին «Ցառաջքան զառնուլ բերդին (Բաղարերդու—Գ. Գ.) ի 615 (1166) թուին»[18]։ Պատմիչն այս փաստն արձանագրում է իր մեկ այլ ստեղծագործության մեջ՝ 1299 թ. Խաչատուր Կեչառեցու խնդրանքով գրված «Ողբք և հառաչանք ի դիմաց... Էջմիածնի» պոեմում[19]։

Վահանավանքի ս. Աստվածածին եկեղեցու զավթում է թաղված նաև Աղվանից Ստեփանոս կաթողիկոսը, որի արձանագրության մի մասը հայտնաբերվեց 1966 թ. պեղումների ընթացքում[20]։

Վահանավանքը քանիցս ենթարկվել է կողոպուտի և ավերի։ Առաջին խոշոր ավերածությունը տեղի ունեցավ 1103 թ., երբ սելջուկ-թուրքերը գրավեցին Կապան մայրաքաղաքը և կազմակերպեցին բնակիչների մեծ կոտորած[21]։ Այնուհետև, 1126 թ. «Եկն ամիր Հարոն ու բնաջինջ արար զտուն Կապանին և զԱրևիք գաւառ էառ և զբերդն Կաքաւու և զքարն Բաղակու, որ էր վանք, յորում մթերեալ կայր բազում սրբութիւնք, խաչ և վկայարանք ոսկի և արծաթի և կտակարանք, որ գաղթեալ էին ի գաւառացն և ամենայն ի գերութիւն մատնեցան»[22]։

1386 թ. Լենկթեմուրի զորքերը ասպատակում են Սյունիքը և Հայաստանի մյուս գավառները։ Պետք է ենթադրել, որ այդ շրջանում Վահանավանքը ապրել է իր գոյության ամենածանր վիճակը։ Լենկթեմուրյան դաժանությամբ սրատել են բոլոր կրոնավորներին ու շրջակա բնակիչներին։ Նույնը կարող ենք ասել Կարա-կոյունլու թուրքմենական ցեղախմբի առաջնորդ Իսկանդարի 1422 թ. դեպի Սյունիք և Խլաթ կատարած արշավանքների ողբալի հետևանքների մասին։ Թե մինչև երբ է գործել Վահանավանքի միաբանությունը և երբ են այս տաճարները վերածվել տխուր ավերակների, առայժմ վաղ է որոշակի խոսք ասել, բացի մասնակի կռահումներից։ Այս առեղծվածը հավանաբար կլուծվի հուշարձանի պեղումներն ավարտելուց հետո։

ՎԱՀԱՆԱՎԱՆՔԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԱԽՄԲԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Գլխավոր տաճար

ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի։ Հուշարձանախմբի գլխավոր տաճարի մայր եկեղեցին կառուցել է Վահան Զաքարյանը 911 թ. և կոչվել է Գրիգոր Լուսավորչի անունով։ Ճարտարապետական տեսակետից՝ խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ մի կառույց է, 12 նիստ ունեցող թմբուկի քիվով։ Բեմի աջ և ձախ կողմերում ունի մեկական խորան։ Ենթադրվում է, որ արևմտյան մուտքի երկու կողմերում նույնպես եղել են համանման խորաններ։ Շինարարը տեղական կարմրավուն բազալտն է։ Եկեղեցու արտաքին երեսպատման քարերը պոկոտված են և օգտագործված այլ նպատակների համար։ Գլխավոր մուտքը հարավից է. տեղում մնացել է հնկայական

---

18 Նույն տեղում, էջ 247։

19 Պատմիչ-բանաստեղծը Սյունիքի թագավորության անկման մասին գրում է՝

Որոյ վերջին Սենեքերիմ
Նաև Գրիգոր որդի նորին,
Ապա և զայս ի բարձ բարձին
Ի ժամանակս Սելջուկացին
Ազգն այլասեռ և պարսկային,
Որք նրով գաշխարն տոչորեցին
Ի վեց նարիւր մեր թուականին
Եւ տասն և ինգ յաւելուածին

(Տե՛ս Ստ. Օրբելյան, Ողբք, Կալկաթա, 1846, էջ 17—18)։

20 Արձանագրության սկզբի մեծ մասը 1960 թ. հրատարակել է Ս. Գ. Բարխուդարյանը (տե՛ս Դիվան, պր. 2, էջ 139)։

21 Ստ. Օրբելյան, էջ 244—245։

22 Նույն տեղում, էջ 245—246։ Ստ. Օրբելյանի կազմած՝ Սյունիքի գործող վանքերի ցուցակում Վահանավանքն արդեն գրավում է 8-րդ տեղը (էջ 249)։

Քակատակայ քարը, որի վրա քանդակված են 11 փոքրիկ համաչափ գծախաչեր։ Եկեղեցին կիսակործան է և փյուղման ենթակա։

բ. Կամարակապ դավիթ։ Կառուցվել է հիմնադիր Վահանի եղբորորդու՝ Վահան Ջևանշերյանի վանահայրության տարիներին, X դարի 30-ական թվականներին։ Ուղղանկյուն-քառանկյուն հատակագիծ ունեցող այս կառույցը այթի է ընկնում իր Հարտարապետական ինքնատիպ լուծումներով։ Մեծամեծ ժայռաբեկորներից կերտած երեք կամարներից մեկը՝ կենտրոնականը, այժմ փլուզված է, մյուսները ամուր կանգնած են քանդակազարդ որմնախոյակների վրա։ 104 քմ մակերեսով այս դավիթը ներքուստ զոտեորված է բուսական ու երկրաչափական անկրկնելի զարդանախշեր ունեցող թիվերով, որոնք առանձին վեհություն են տալիս կառույցին[23]։



Նկ. 1. Վահանավանք։ Դր. Լուսավորիչ եկեղեցու, դավթի և սյունասրահի մոտավոր վերակազմական հատակագիծ։ Ճարտարապետներ Ա. Մելքյան և Լ. Մելիքյան

Կամարակապ դավիթն ունի 2 մուտք՝ մեկը արևելյան կողմից, որը տանում է դեպի եկեղեցի, մյուսը՝ հարավից։ Հարավային մուտքով այն միացած է սյունասրահին։ Պահպանված կամարներից կարելի է ենթադրել, որ բնարկվող շինությունը եղել է սաղաշեն, իսկ ծածկը պատված է եղել կարմիր կղմինդրով։ Այստեղ են հանդիսում Վայոդանի մայր եպիսկոպոսի, Վահան Զագիկյանի, Սենեքերիմ թագավորի որդի Կյուրիկե-Դուրդենի, Դեորդ Պոհրատունու և այլոց աճյունները։ Վահանավանքի կամարակապ դավիթը միջնադարյան հայ ճարտարապետության հոյակապ կառույցներից մեկն է և ուրույն տեղ է գրավում շինարարական մտքի պատմության մեջ։

գ. Սյունասրահ։ Առանձին հետաքրքրություն է ներկայացնում գլխավոր տաճարի սյունասրահը։ Այն ունի 140 քմ մակերես և քառանկյունի 7 որմասյուներ (պիլաստր), որոնց վրա կանգնած են եղել դեպի հյուսիս, հարավ և արևմուտքից արևելք ձգվող կիսաշրջանաձև կամարներ։ Կամարների վրա տեղակայված են եղել ծածկի միջնամասային կորամեջ սալաքարերը, որոնց վրա հավանաբար ադուցված են եղել երկթեք տանիքի կղմինդրե ադյուսիկները։ Հարավային կողմից ունի երկու մուտք, որոնցից մեկը հաղորդակցում է փլուզված սեղանատանը։

Սյունասրահում պեղումներ կատարելիս հայտնաբերվել են բազմաթիվ խաչքարեր, մեծաքանակ խեցեղեն և վիմական արձանագրություններ, որոնց մեջ առանձին կարևորություն է ներկայացնում Սլունիքի Սմբատ II թագավորի շինարարական արձանագրությունը։

23։ Ուսումնասիրողներից ոմանք կարծում են, թե այս թիվերի հյուսվածքների փորագրությունը նման է Զվարթնոցի խոյակների կողմերին, ինչպես նաև Անիի Գագիկաշեն եկեղեցու և Գոյանների թիվերին։ (Տե՛ս Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղբատի և Գագի եկեղեցիները, գրեց Մեսրոպ Մաղիստրոս արքեպ. Տեր Մովսիսեան, Երուսաղեմ, 1938, էջ 18)։

Շահանդուխտի դամբարան-եկեղեցի

Ստեփանոս Օրբելյանը իր «Պատմութեան» ԽԴ գլխում պատկերելով Վահանավանքի բուռն ծաղկման շրջանը, հատուկ նշում է, որ «...յետ բազում ժամանակաց յաւուրս Գրիգորի՝ թագաւորի Բաղաց ի Շահանդխտոյ թագուհւոյն և ի կայտայէ և Սենեքերիմայ թագաւորէ բազում և գեղեցիկ շինուածովք առաւել գեղեցկացուցին զվանսն Վահանու՝ կանգնեալ կամարս մեծամեծս. և ի վերայ՝ եկեղեցին և սրահս բազմասիւնս բարձրաբերձ, հովանի և խրախարան իշխանացն»[24].

Պատմիչի բանաստեղծական նկարագրությունը վերաբերում է Վահանավանքի համակառույցի կրկնահարկ դամբարան-եկեղեցուն, որը ըստ պահպանված արձանագրության կառուցվել է 1086 թ. և կոչվել է ս. Աստվածածնի անունով։ Եկեղեցին համեմատաբար փոքր է, սակայն աչքի է ընկնում իր ճարտարապետական մտահղացումներով։ Դեպ արևմտյան գավիթը կառուցված է սարալանջի ժայռաբեկորի հարթեցրած մասի վրա, ապա նրան կից ս. Աստվածածինը վեր է խոյանում ճեղքված քարերով պատրաստված արևելյան կամարի երկայնությամբ։ Արևմտյան կողմում երևում է մի պատուհան (թերևս դուռ), որը ծածկված է շինաքարերի ու չաղախի փլատակներով։ Առայժմ հնարավոր չէ որոշակի պատկերացում ունենալ այս հուշարձանի նախնական վիճակի մասին, քանի որ ներքևի հարկաբաժինը ամբողջապես լցված է հողազանգվածի հաստ շերտով։ Ս. Աստվածածինը կառուցված է նույն կարմրավուն բազալտի սրբատաշ ժայռաբեկորներից, որոնցով այնքան հարուստ է Վահանավանքի արևմտյան լեռնազանգվածը։

Գերեզմանոց

Սյունյաց և Աղվանից իշխանազունների գերեզմանոցը ըստ նորահայտ խաչքարերի և տապանաքարերի գտնվում է վանքի հյուսիս-արևելյան կողմի սարալանջին։ Գերեզմանաքարերի մեծագույն մասը ծածկված է հաստ հողաշերտով և անտառային բուսականությամբ։ Այստեղ է գտնվում Շահանդուխտ թագուհու քանդակազարդ խաչքարը, որը կերտված է 1081 թ.։

Հին բնակատեղի և աղբյուր (X դ.)

Վանական համակառույցի արևելյան կողմում, աղբյուրի շուրջը, սարալանջով սփռված են երբեմնի մեծ բնակավայրի բազմաթիվ ավերակները։

Բնակարաններից մի քանիսի պատերի մեջ նկատվում են վանքի շինաքարերի առանձին նմուշներ, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ այդ շենքերը վերակառուցվել են Վահանավանքի կործանումից հետո։ Բնակարանների մեծագույն մասը պատրաստված է տարբեր չափի ու մեծության տձև քարերի համադրումից, օգտագործված են նաև արհեստականորեն ճեղքված կարծր քարատեսակներ։ Բնակարաններն առանձնապես խիտ են աղբյուրի շուրջը և ունեն տարածական տարբեր ծավալներ։ Հիշատակված աղբյուրը գտնվում է գլխավոր տաճարից հարավ-արևելք, մոտ 80 մ. հեռավորության վրա, ձորը տանող հին ճանապարհի եզրին։ Աղբյուրի ջուրը բերված է կավե թրծած խողովակներով (քյունեերով) Վահան Ջևանշերյանի վանահայրության տարիներին։

ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վահանավանքը որքան աղքատ է հնագիտական առարկաներով, այնքան հարուստ է վիմական արձանագրություններով[25]։

1966—69 թթ. մաքրման աշխատանքների ընթացքում հայտնաբերվել են հետևյալ արձանագրությունները։

1. Գլխավոր տաճարի կամարակապ դավթից. Տապանաքար, ուղղանկյուն, քառանկյուն, տափակ երեսին՝ ԽՈՒՇՈՒՇ ՄԱՅՐ ՎԱՉԱԳԱՆԱ[26]։

Տապանաքար փոքր-ինչ թեքված՝ ԱՅՍ Է ՀԱՆԴԻՍՏ ՅՈ /ՎԱՆԻՍԻ ՈՐՔ ԿԱՐԴ/ԱՅՔ ՅԻՇ/ԻՑԷՔ Ի /ՔՍ ԹՎՍ/ՉԿԶ (1317)։

---

24 Ստ. Օրբելյան, էջ 176։

25 Ս. Գ. Բարխուդարյանի հրատարակած զանգեզուրյան պրակում (Դիվան հայ վիմագրության, պրակ. 2, Երևան, 1960, էջ 138—139), Վահանավանքից գտնեղված է 5 արձանագրություն։

26 Այս Վաչագանը թագավորել է հայոց Աղվանքում X դարի առաջին կեսին (տե՛ս Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Անձնանունների բառարան, հ. 5, Երևան, 1962, էջ 39)։ Ենթադրում ենք, որ Խուշուշը հիշյալ Վաչագանի մայրն է։

Խաչքարի բեկոր՝ ԹՈՒՔ ԱԿԱՆԻՍ/... /ՀԱՅՐ ՍՏԵՓԱՆՈՍ/։

Խաչքարի բեկոր՝ Թ. ՆԶ. (957) ՍՏԵՓԱՆՈՍ/ ԿԱՆԳՆՈՂ ՆՇԱՆԻՍ. Մյուս կողմում՝ ՍՏԵՓԱՆՈՍ/. ՆԱԻ ԲԱՐԵԼԱԻՍ/ԱՇԱՅՆԻՆ։

2. Դրիոր յուսավորչի եկեղեցու մոտ՝ արևելյան օտարալեզից.

Խաչքար՝ թվ. Շ.... ՉՀՐԱՀԱՏ ՅԻՇԵԱ ՔՍ ԱՇ։

Խաչքար՝ ... ՉԴՐԻԴՈՐ ԵՎ ԴՍՍԳԱՏԻԿ ՅԻՇԵԱ ՔՍ. ԱՇ։

Խաչքար՝ Թ. ՆԺԿ (955) ԳՍՏԵՓԱՆՈՍ ՅԻՇԵԱՅ ՔՍ ԵՒ ՈՂՈՐՄԵԱ։

Խաչքար՝ անմշակ բարից. Նախկին աեղն անհայտ՝ ՉՀԱՄԱՍ ՅԻՇԵԱ ՔՍ։

Խաչքար. Թ. ՆԼԶ (997) ՉԼԱՅՐ ՅՈՎԱՆԷՍ ՅԻՇԵԱՅ ՔՍ։

Խաչքար՝ Ի Թ/ՎԱԿԱՆԻՍ՝ (1031) ԴԴԷՈՐԳ ՆՈՒԱՍՏ ՔԱՀԱՆԱ /ՅԻՇԵՑԵՔ ԵՂԲԱՐՔ։

Խաչքար՝ 50/70 սմ չափսի, բանդակազարդ, շուրջը. ՅԻՇԵԱ ՔՍ. ԱՇ ԶԴԼՎՍՏԱՀ ԵՎ... ՈՂՈՐՄԵԱՅ ԹՎ. ՇԼԴ (1034)

3. Դոնոր բակում. Տապանաքար՝ Թվ. ՇԼԴ (1035) ԶՄԱՄՈՒԿՆ ՅԻՇԵՑԷՔ։

4. Արևելյան օտակի աղբյուրի մոտ. Խաչքար, կոտրված երկու մասի, ուղղահայաց խաչքարի վերև՝ ԲՈՒԱԿԱՆ/ՈՒԹԵԱՆՍ/... ԱԻՐ... ԵՂԵՒ...

5. Շանանդուխտի եկեղեցու դավիթից գտնված 9 բեկորների համադրումից պարզվեց, որ 7-ը վերաբերում են միևնույն արձանագրությանը։ Դա Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի արձանագրությունն է, որի սկզբի մասը հրատարակել է վիմագրագետ Ս. Դ. Բարխուդարյանը[27], արձանագրությունների դանդեղության պրակում։

Ահա այդ արձանագրությունն իր ամբողջական բովանդակությամբ՝ բացված փակագծերով.

ԵՍ /ՏԷ/Ր/ՍՏԵՓԱՆ/ՈՍ ԱՂՎԱՆԻՑ ԿԱ/ԹՈՂ/ԻԿՈՍ/ՆԵՂԵԱԼ Ի ՏԱՀ/ԿԱՅ ԵԿԻ ԵՒ ՀԱՆԳ/Ե/Ա/Յ ԱՆԱՍԷՐ ԹԱԳ/ՈՒՀ/Ն/ԱՅ ՇԱՀԱՆԴԵՏՈՅ /ԵՒ ԿԱ/ՏԱՒՆ ԵՎ ԵԿԵՂԵՑ/ՈՅՍ/ ԴԱՒԹԻՍ ՈՐ... /ՉՍՈՅՍ ՎԵՐՆՍՅԱՐԿԱՑՆ ԵՎ ՊՍԱԿԱՑՆ ԱՐԹԱՆԻ ԱՐԱՍՑԷ. ԵՒ ԶԹԱԳԱՒՈՐՍ Ի/ԻՐ ՈՐԴԵՆԱՒՔՆ ԿՆՑ/ՈՒՑԷ ԱՆ Ի ԿԱՄՍ ԻՒՐ ԱՄՅԻ

6. Կումայրակսսյ գավիթի հյուսիսային կողմում՝ շինաբարարների մեջ՝ ՄԱՂԹԵՄՔ ԶՔՈ /ԲԱԲԵԳԹՈՒԹ/ԻՍ ԱՆ ԲԵԶ ՀՆՏ /ԵՒԵԱԼ ԳԱՀՍՏԵԱՆ.../ՄՏԵԼՈՅ ՅԱՌ/ԱԳԱՍՏ ԼՈՒՍՈՅ /ՓԱՌ... ՇԻՆՈՂ ՍՐ. ԽՈՐԱՆԻՍ։

Վահանավանքի, ինչպես նաև Սյունիքի թագավորության ժամանակաշրջանի պատմության համար մեծ կարևորություն է ներկայացնում այն արձանագրությունը, որը հայտնաբերվեց 1964 թ. օգոստոսի 15-ին տաճարի, այժմ արդեն կասկած չհարուցող, հյուսիսարևելյան մաքրելու ժամանակ։ Նորահայտ արձանագրությունը փորագրված է կիսաշրջանաձև երկու սալաքարերի վրա, որոնք կիպ ադուցված են եղել դավթի հարավային մուտքի աջակողմյան կամարասյան միջև՝ հատակից 1,5 մ բարձրությամբ։ Ավելի քան 2 մետր երկարություն ունեցող վեցտողանի այս արձանագրությունը փորագրված է խոշոր հատ-հատ տառերով, իսկ փակագրային սկզբունքը կիրառված է միայն Ո և Ր տառերի միացության դեպքում։ Ահա վիմագրի նույնական պատճենը.

Թվ. ՆՂԵ. (1046)

ՈՂՈՐՄԵԱ ՔՍ ԱՇ ԱՄՊԱՏՄԱ ԹԱԳԱՒՈՐԻ
ԵՒ ԻՒՐ ԵՂԲԱՒՐՆ ԳՐԻԳՈՐՈ ՇԻՆՈՂԻ ՍՐԲՈ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՍՐԱՀԻՍ ԵՒ ԺԱՄԱՏԱՆՆ. ՈՐՔ ՄՏԱՆԷՔ ՅԱՐԿՍ ՍՐՐՈՒԹԵԱՆ ՀՍՈՅԱ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ։

Բարձր դնահատելով նորահայտ արձանագրության պատմական արժեքը, միաժամանակ հարկ է նշել, որ փորագրության թվականը տեղիք է տալիս լուրջ մտորումների։ Ստեփանոս Օրբելյանը հատուկ նշում է. «Եղև շինութիւն սուրբ ուխտին (Վահանու վանից— Գ. Գ.) յ 360 թուականին հայոց (911 թ.) ի թագաւորութեանն Սմբատայ Բագրատունւոյ...», երբ Բագրի իշխանը Զևանշահն

27 Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, պր. 2, էջ 138։

Նկ. 2. Սմբատ II-ի 1046 թ. շինարարական արձանագրությունը

Նկ. 3. Անեքերիմ Բագավորի որդի Կյուրիկե-Գուրգենի սապանաքարը տաճարի գավիթում

էր՝ Վահան Զաքիկյանի եղբայրը։ Իսկ նորահայտ արձանագրության մեջ պարզ նշված է, որ ժամատուն, եկեղեցին և սրահը կառուցվել են 1046 թ. Սյունյաց Սմբատ Թագավորի և նրա եղբայր Գրիգորի կողմից։ Արդյո՞ք սխալ է սյունյաց պատմիչի թվագրումը։

Մեր տարակուսանքները փարատվեցին մեկ տարի հետո։

1969 թ. հոգոստոսի 4-ին կամարակապ գավթի հողաքանդվածը մաքրելիս հայտնաբերվեց առաջին կառուցող Վահան Զաքիկյանի տապանաքարը՝ ՏԷՐ ՎԱՀԱՆ ՆԱԽԱՇԻՆՈՂ ՏԵՂ ԵՂԱՅՍ մակագրությամբ։

Նշանակում է Սյունյաց Սմբատ II Թագավորի շինարարական արձանագրությունը վերաբերում է տաճարի կառույցների նորոգմանը։ Իսկապես Վահանավանքը 1046 թ. վերակառուցվել է և ոչ թե հիմնադրվել։ Այսպիսով մեկընդմիշտ հաստատվում է Ստ. Օրբելյանի այն վկայությունը, ըստ որի Վահանավանքը կառուցվել է 911 թ. և ոչ 1046 թ., ինչպես արձանագրել են Սյունյաց թագավորները։

1963 թ. պեղումների ընթացքում հայտնաբերվել են մի շարք արժեքավոր արձանագրություններ, որոնք նպաստում են Սյունիքի (և ոչ միայն Սյունիքի) միջնադարյան պատմության դեռևս ադոտ լուսաբանված կողմերը բացահայտելուն։ Դրանց մի մասը վերաբերում է Սյունյաց իշխանների և թագավորների տոհմագրությանը։ Վերոհիշյալ «Վահան Նախաշինողի» արձանագրություններից բացի կամարակապ գավթի հատակից գտնվել են հետևյալները՝ ԿԱՏԱ ԴՈՒ/ՍՏՐ ԱՇ/ՈՏՈ։

Այս կտտային յպետք է շփոթել Շահանդուխտ թագուհու քրոջ հետ, որը Հայոց Աղվանքի թագավոր Սևադայի դուստրն էր։ Ենթադրվում է, որ նորահայտ Կատան եղել է Վասակ Սյունյաց թագավորի դահակալության ժամանակ իշխանաց իշխանի պաշտոնը գրաղեցնող Աշոտի դուստրը և Սմբատ II ու Գրիգոր I թագավորների քույրը։ Նույն գավթի հատակը մաքրելիս հայտնաբերվեց 6 տողանոց մեկ ուրիշ արձանագրություն, ուր հիշատակվում՝ է՝ Թ. ՇԾ. (1101) /ԶԳԻՈՐ/Գ ՊԱՀ-ՀԱ/ԻՍԻՆԻ ՈՐԴ/Ի ԱՐՀԱՄԻՐ/ ՑԻՇԵՑԷՔ։

Դեռևս վաղ է հաստատ վճիռ կայացնել հիշյալ Գեորգ Պահլավունու ինքնության վերաբերյալ, առանց մատենագրական աղբյուրների ուշադիր քննության, սակայն անժխտելի փաստն այն է, որ Վահանավանքի գավթում Պահլավունի Գեորգի տապանաքարի հայտնաբերումը ապացուցում է Հայաստանի երկու հզոր իշխանական տոհմերի՝ սյունեցիների և պահլավունիների սերտ հարաբերությունները XI—XII դդ.։

Հաջորդ արձանագրություններ, որոն աչքի է ընկնում փակագրային դասական ձևերի հմուտ դոր-ծածմամբ, վերաբերում է Սյունյաց Սեներիրիմ թագավորի որդուն։ 7 տողանոց այս արձանա-գրություն հետևյալ պատկերն է ներկայացնում. ԶԿԻՐԻԿԷ ՈՐԴԻ ՍԵՆԻՔԱՐԻՄ Թ/ԱԳԱՒՈՐԻ ԿԻՍԱՒՐ/Է ՀԱՆԳՈՒՅՇԵԱԼ/ՅԱՂԱՒԹՍ/, ՑԻՇԵՑԷՔ, /Թ. ՇԾԸ. (1099)։

Այս Կյուրիկե-Գուրգեն նույնպես մտորումների տեղիք է տալիս։ Մեր մատենագրական աղ-բյուրներից գիտենք, որ Սյունյաց Սեներիրիմ թագավորը (Գրիգոր I թագավորի աներորդին և հաջորդը) Շահանդուխտի կրտսեր եղբայրն էր և ուներ երեք որդի՝ Սմբատ, Գրիգոր և Սևադա։ Սմբատը և Գրիգորը, ինչպես նշել ենք, մահացել են 1166 թ., մինչև թագաբերդի անկումը, որ տեղի ունեցավ 1170 թ.։ Սևադա որդու մասին դեռևս տեղեկությունները բացակայում են, միայն այն գիտենք, որ նա վախճանվել է Երիտասարդ («Կիսարք») հասակում, 1099 թ.։

1970 թ. պեղումների ընթացքում մեծ տաճարի սրահը և նրա հարավային բակի փլատակները մաքրելիս հայտնաբերվեցին ավելի քան մեկ տասնյակ նոր արձանագրություններ, որոնցից մի բանի մեջ հիշատակված անձնանունների մասին վկայություններ են պահպանվել Ստ. Օրբելյանի «Պատմութեան»-ում։

Այդ արձանագրություններից են՝ Տապանաքար (ուղղանկյուն-քառանկյուն), վրան 6 տող փակագրով գրված է՝ Հ[ԱՅՈՑ] Թ[ՈՒԱԿԱՆՈՒԹԻԱՆՆ] ՇԻՆ (1076) ԶՔՈՒՐԴԻԿ/ ՄԱՐԷՋՐԵՑԻ/ ՅԱ-ՂԱՒԹՍ ՅԻ/ՇԵՑԷՔ ԱՂ/ԱՋԵՄՔ։

Քուրդիկ Մարեջրեցու ով լինելը դեռևս հայտնի չէ։ Ստ. Օրբելյանի մոտ հիշատակություն կա Քուրդոյ ձեով և չի առնչվում այս Քուրգիկի հետ, որովհետև Քուրդոն հանդիպում է IX դ. (844 թ.) կալվածագրերից մեկում։ Հետաքրքրություն է ներկայացնում Մարեջուր տեղանունը, որը բացակայում է Ստ. Օրբելյանի հարկացուցակներում և տեղագրություններ դեռևս պարզված չէ։ Վահանա-վանքում թաղված է մեկ այլ Մարեջրեցի՝ Սողոմոն անվամբ, որի տապանագիրը թվագրված է 1084 թվականով և մոտ է Քուրդիկի մահվան տարեթվին։

Տապանաքար (երկ. 1 մ 60 սմ, լայն. 60 սմ), սակավ մշակված երեսին գրված է. ՎԱՐԴ/ ՈՒԿ։

Հր. Աճառյանի կարծիքով Վարդուկ անունը արական է և առաջացել է հայերեն «վարդ բառի

գգվականից։[28] Ամենավաղ հիշատակությունը փաստորեն պետք է համարել Վահանավանքի վարդուկը, քանի որ Հր. Աճառյանի նշածը վերաբերում է 1636 թ.։

Տապանաքար (սրածայր գլխամասով. երկ. 1 մ 70 սմ, լայն. 70 սմ), հարթ երեսին խոշոր տառերով փորագրված է՝ ՀԱՍՅԱՆ։

Զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում. Սյունյաց նահանգում երեք նշանավոր հասաններ էն եղել։ Ժամանակագրական տեսակետից ամենավաղ շրջանում. XI դ. երկրորդ կեսին գործել է Վահանավանքում հանգչող Նորահայտ Հասանը. որը Գրիգոր (Գրիգորիկ) իշխանի որդին էր և Սյունյաց Սենեքերիմ թագավորի ականավոր զորապետներից մեկը։ 1086 թ. կազմված կալվածագրում նշվում է, որ Հասան Գրիգորյանը Սենեքերիմի հրամանով Տաթևի վանքին է վերադարձնում Կովսական գավառի Նորաշինիկ և Զեռատի վանք գյուղերը։ Հիշյալ կալվածագրում Հասանը ընդգծում է, որ «ես զիմ բերդն ի Մշտաքախթենէն առի և զԿովսական գաւառ իմ արեամբս յամիրայ Փատլնոյ թափեցի։[29] Սենեքերիմ թագավորն իր հերթին վավերացնում է «զՀասանայ վէհոս. որ զայս շինարիս (իմա՝ Նորաշինիկն ու Զեռատի վանքը —Գ. Գ.) որ ի Տաճկաց թափեալ է իւր արեամբն, այլ ի Տաթև երեսն իմ հրամանաւ»։[30]

Մյուս Հասանը, որ Սյունյաց Գրիգոր II թագավորի դուստր Կատայի ամուսինն էր և Կապանի (Քաղքի) թագավորության վերջին դահակալը, ծագումով Խաչենցի էր։ Հոխանակ հոգ տանելու երկրի պաշտպանության մասին և անձամբ ղեկավարելու Գանձակի ամիրայի դեմ մղվող ճակատամարտերը, նա «Կացոյց բերդապահս (Թաղաբերդի —Գ. Գ.) և ինքն առեալ զկին իւր և զընտանիս ի գիշերի ել ի բերդէն՝ և անց գնաց ի գաւառս իւր և ի տուն՝ ի Խաչէնք»։[31]

Փաստեր չկան ենթադրելու, թե իր ընտանիքը Խաչենք տեղափոխելուց հետո Հասանը վերադարձել է նորից Կապան, մանավանդ որ 1170 թ. Սյունյաց «հոյս և ապաւէն» հանդիսացող Թաղաբերդ ամրոցը հիմնահատակ կործանվել էր և վերջ էր տրվել Սյունյաց թագավորությանը։

Երրորդ Հասանը եղել է Համտուն իշխանի որդին և Համտուն I-ի հայրը։ Համտուն II Հասանյանը վախճանվել է 1231 թ. և թաղվել Վայոց Ձոր գավառի Նորավանքում (Ամաղու), իր եղբայր Հովհաննես կրոնավորի մոտ ապաստան գտնելուց հետո։[32]

Ուրեմն, Վահանավանքում հայտնաբերված տապանաքարը XI դ. երկրորդ կեսին գործող Հասան իշխանինն է։[33]

Տապանաքար (Նախորդից 2 մ հեռու), հարթեցրած երեսին գրված է՝ ԽԱՏ/ԱՏՈՒՆ։[34]

Խաչատունի վերաբերյալ բացի փաստն արձանագրելուց. առայժմ ոչինչ չենք կարող ասել։

Տապանաքար (ուղղանկյուն-քառանկյուն. գտնվում է սրահի հարավ-արևմտյան մուտքի առաջ և ծառայում է որպես շեմ-քար), հարթեցրած մասին փորագրված է մեկ տող՝ ՌԱՀԻՐԻԿ։

Արձանագրությունն, ըստ երևույթին, անավարտ է, քանի որ երկու եզրամասերում էլ փորագրման համար տեղ կա։ Հավանաբար պետք է լիներ «Ռահիրա», կամ՝ «Յիշեա Ս[ուրբ]ս Ռահիրա» ընդհանուր ճանաչում ստացած ձևով։ Կասկածից դուրս է, որ սա տապանաքարն է այն Ռահիրի, որին տարբեր առիթներով հիշատակում է Ստ. Օրբելյանը իր «Պատմութեան» մեջ։ Վերոհիշյալ Հասանի նվիրատվական կալվածագիրը հաստատող վկաներից մեկը հենց այս Ռահիրն է.

«Եւ ես Ռահիրս վկայ եմ այս արարուածիս. զոր մի՛ ոք իշխեսցէ հակառակ կալ։ —Ի թուականիս Հայոց 535 (1086)»։[35]

Ռահիրը որպես վկա հիշատակվում է նաև 1091 թ. կալվածագրում։[36] Ըստ երևույթին Ռահիրը Սենեքերիմ թագավորի օրոք եղել է Սյունիքի իշխանաց իշխան, այլապես չէր կարող հիշատակվել թագավորից անմիջապես հետո։

Սյունաստանի հարավ-արևելյան (կենտրոնական) մուտքի դիմացը մաքրելիս՝ հատակի վրա հայտնաբերվեցին իրար կից շարված չորս սալաքարեր, որոնք ունեն միևնույն տող խոշոր, հստակ տառերով փորագրված արձանագրություն։

---

28 Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց անձնանունների բառարան, հ. ե, Երևան, 1962, էջ 115։

29 Ստ. Օ ր բ ե լ յ ա ն, էջ 239—240։

30 Նույն տեղում, էջ 240։

31 Նույն տեղում, էջ 246։

32 Նույն տեղում, էջ 247։

33 Վահանավանքից դեպի հարավ գտնվող անտառապատ սարալանջը մինչև որ էլ այս Հասանի անունով կոչվում է «Հասան երիս—Հասանի տիրույթ, կալված։

34 Երկրորդ տողի ա և տ տառերը գրված են փակագրով։

35 Ստ. Օ ր բ ե լ յ ա ն, էջ 240։

36 Նույն տեղում, էջ 242։

Առաջին (հյուսիսից դեպի հարավ) սալաքար-տապանաքարին (Երկար. 1 մ 03 սմ. լայն. 1 մ 12 սմ) փորագրված է ԴԻՆԱՐ։

Դինարի մասին Սյունյաց պատմիչի մոտ ոչ մի հիշատակություն չկա, բոլոր երևույթին. նա Հայոց Աղվանքի ականավոր իշխաններից մեկն էր, որովհետև Սյունյաց արքունական մեծ տաճարի սրահում սովորաբար թաղվում էին հատկապես ազնվական-իշխանական դասի առավել այրի ընկնող ներկայացուցիչները։

Երկրորդ տապանաքարը (լայն. 1 մ 05 սմ, երկար. 1 մ 06 սմ) ունի՝ ՉՎԱՆՇԵՐ արձանագրությունը։

Չեանշերը եղել է Սյունիքի նշանավոր իշխաններից մեկը։ Նա Վահանավանքի հիմնադիր Վահանի ավագ եղբայրն էր և նոր մեծագոր Զաքիկ դահակալ իշխանի մահվանից հետո դարձավ Լաստաց աշխարհի և Կապան քաղաքի տերը։ Չեանշերը, ինչպես նշել ենք, խոշոր դեր խաղաց Սյունյաց թագավորությունը հիմնադրելու գործում[37]։

Իր անբատական ձգտումների և Սյունյաց Հակոբ եպիսկոպոսին հովանավորելու համար, Չեանշերը բանադրվում է Անանիա Մոկացի կաթողիկոսի կողմից և ապա, երբ Անանիան երկրորդ անգամ ժամանում է Կապան, նա և Վասակ դահերեց իշխանը «զեղեցիկ խոստովանությամբ մեղալ կարդացեալ (առնուն) ի միասին դիմոյթիւն յանցանացն»[38]։

Չեանշեր իշխանի որդին՝ Վահանը, ուսանելով Վահանավանքի դպրոցում, դարձել էր կուսակրոն վանական։ Հետագայում նա դառնում է այդ վանքի առաջնորդը, ապա Սյունյաց եպիսկոպոս, իսկ Անանիայից հետո ընտրվում է կաթողիկոս։

Երրորդ տապանաքարին (Երկար. 1 մ 10 սմ, լայն. 1 մ 05 սմ) փորագրված է՝ ԳՐԻԳՈՐ։

Արդեն նշվել է, որ Սյունյաց Սմբատ II թագավորի 1046 թ. արձանագրության մեջ հիշատակվում է Գրիգոր անուն։ Վիմագրության հեղինակները ստծուն խնդրում են ողորմություն շնորհել «Սմբատայ թագաւորի և իւր եղբարն Գրիգորոյ՝ շինողին սրբոյ եկեղեցւոյս, սրահիս և ժամատանս»։

Ինչպես տեսնում ենք, մեծ սրահում թաղված այս Գրիգորը ոչ այլ որ է, եթե ոչ՝ Սմբատ II թագավորի հարազատ եղբայրը, որը Սյունյաց դահ է բարձրացել ավագ եղբոր մահից հետո և պատմագիտական գրականության մեջ հայտնի է որպես Գրիգոր I Սյունյաց թագավոր։ Սմբատն ու Գրիգորը եղել են իշխանաց իշխան Աշոտի (Վասակ թագավորի կնոջ եղբոր) որդիները։ Ի տարբերություն Սմբատի, որը «առաւել էր քաջքը և հեղհամբոյր և ահարկու շրջակայ ազգաց»[39], Գրիգոր I-ը եղել է խաղաղասեր թագավոր և իր կին Շահանդուխտի հետ միասին առավելապես զբաղվել է շինարարական աշխատանքներով։ Գրիգորի մասին, ինչպես ասել ենք, հատուկ նշված է Վահանավանքի կրկնահարկ դամբարան-եկեղեցու 1086 թ. արձանագրության մեջ. «Ես Շահանդուխտ դուստր Սեղոյի Աղվանից թագաւորի և ամուսին Գրիգոր թագաւորի որդոյ Աշոտկայ...»։

Մատենագրական աղբյուրներում Գրիգորի մասին առաջին անգամ հիշատակվում է 1019 թ. Վասակ թագավորի հրամանագրի մեջ։ Այստեղ նա իր ավագ եղբայր Սմբատի հետ միասին հանդես է գալիս որպես վկա. «Ես ես Գրիգոր որդի Աշոտի իշխանաց իշխանի վկայ եմ բեռոյս աստուածաղաղակ թագաւորիս հրամանայս»[40]։ Գրիգորի մասին հատուկ նշվում է նաև Սյունյաց Սենեքերիմ թագավորի 1085 թ. կոլոֆոնագրում[41]։

Գրիգոր I-ը, ինչպես նաև նրա եղբայր Սմբատ II թագավորը ժառանգներ չեն ունեցել[42]։

Չորրորդ տապանաքարին (լայն. 1 մ 42 սմ, երկար. 70 սմ) նույնպես խոշոր տառերով փորագրված է՝ ԱՇՈՏԻ։

Անկասկած, սա տապանաքարն է Աշոտ իշխանաց իշխանի՝ Սմբատ II և Գրիգոր I թագավորների հոր, որի անունով էլ նրանք կոչվել են «ազգ Աշոտեանք»[43]։ Բառի փաղաքշական ձևը՝ Աշոտիկ[44], մեկ անգամ հանդիպում է Շահանդուխտ թագուհու 1086 թ. արձանագրության մեջ՝

---

37 Տե՛ս Ա. Ատրեկյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., էջ 90։

38 Ստ. Օրբելյան, էջ 207—208։

39 Նույն տեղում, էջ 233։

40 Նույն տեղում, էջ 224։

41 Նույն տեղում, էջ 237։

42 Նույն տեղում, էջ 233—234։

43 Նույն տեղում, էջ 233։

44 Մատենագրական աղբյուրներում և, մասնավորապես, Վահանավանքի նորահայտ արձանագրություններում հաճախ է կիրառվում անվան փաղաքշական ձևը. օրինակ, Վահանիկ, Գրիգորիկ, Սմպատիկ և այլն։

հոլովված ձևով. «...և ամուսին Գրիգոր թագաւորի՝ որդոյ Աշոտկայ (Աշոտիկ — սեռ. հոլ. — Աշոտկայ — Գ. Գ.)։

Մեծ սրահի արևմտյան հատվածում հայտնաբերվել են նաև այլ տապանաքարեր, որոնցից հիշատակենք մի քանիսը.

Տապանաքար (երկար. 1 մ. լայն. 85 սմ). հարթեցված երեսին գրված է՝ ԶԳԻՈՐԳ ՄԵ ՀԵՒԼ-ՆԱ ՈՐԴ/Ի ՅԻՇԵՑԷՔ։

Մեհնանը (Օրբելյանի մոտ՝ Մահնան) և իր որդի Գևորգը ապրել և գործել են XI դ. և եղել են Սենեքերիմ թագավորի աղատներից։ Այս մասին նշված է 1091 թ. կալվածագրերից մեկում[45]։ Ստ. Օրբելյանը Մեհնանին կոչում է «մեծ իշխան» և բարեպաշտ հավատացյալ, որովհետև սա իր որդի Գևորգի հետ միասին Տաթևի վանքին էր վերադարձրել Հարժիս, Բերդկաներեչի գյուղերն ու Ցուրագետը[46], որոնք նախապես պատկանելիս են եղել Սյունյաց եպիսկոպոսարանին։ Կալվածագրից իմացվում է, որ Մեհնանն ու Գևորգը վերոհիշյալ գյուղերը Տաթևին են վերադարձրել «Հրամանաւ աստուածապահ թագաւորիս մերոյ Սենեքերիմայ...»[47]։

Տապանաքար (գտնվել է շրջված վիճակում. հատակի մակարդակից 50 սմ խորության վրա). վրան մեկ տող գրված է՝ ԿԱՏԱ։

Ի տարբերություն վերոհիշյալ Կատայի՝ սա Սենեքերիմ թագավորի քույր Կատան է, որի մասին քանիցս հիշատակված է և՛ Ստ. Օրբելյանի «Պատմութեան» մեջ, և՛ Վահանավանքի վիմական արձանագրություններում. 1085 թ. հրամանագրերից մեկում Կատան հիշատակվում է որպես «սրբասնունդ օրիորդ»[48]։ Նրա մասին հատուկ նշված է 1081 թ. կերտված քանդակազարդ խաչքարի վրա։ Կատան եռանդագին մասնակցել է իր քույր Շահանդուխտ թագուհու շինարարական գործունեությանը. երկու քույրերով միասին նրանք կառուցել են Վահանավանքի կրկնահարկ դամբարան-եկեղեցին (1086 թ.). «Վասն ոչ դոլոյ մեր ի միասին ժառանգ ըստ մարմնոյ ես և քոյրս իմ Կատայս շինեցաք զսուրբ Աստուածածինս...» գրում է Շահանդուխտ թագուհին իր հայտնի արձանագրության մեջ։

Կատայի տապանաքարից փոքր-ինչ դեպի արևմուտք նույնպես շրջված վիճակում հայտնաբերվեց մեկ ուրիշը (երկար. 77 սմ, լայն. 47 սմ), որն ի տարբերություն մյուսների վրան (աջ մասում, վերուստ) ունի գծախաչ և 3 տող արձանագրություն՝ ՅԻՇԵԱՅ Ք[ՐԻՍՏՈ]Ս Զ[Ն]ԴԻԱՂ ԵՒ Զ/ԻՒՐ ԿԵՆԱԿ/ԻՑ/Ն[49]։

Այս արձանագրության մեջ հիշատակված Սնագայի վերաբերյալ կարելի է անել երկու ենթադրություն՝ ա) Սնագան Սենեքերիմ թագավորի հայրն է, բ) որդին է նույն թագավորի։

Ավելի հավանական ենք համարում առաջին ենթադրությունը։

Մատենագրական աղբյուրներից գիտենք, որ Սենեքերիմի (իմարկե, նաև Շահանդուխտի և Կատայի) հոր անունը եղել է Սնագա, մորը՝ Սոփի։ Սրանք եղել են Հայոց Առանձին Կողմանքի տիրակալները և հավանական է «ենեղեալ ի տաճկաց», այսինքն՝ սելջուկներից, Ազվանքի Ստեփանոս կաթողիկոսի հետ միասին ապաստանել էին իրենց զավակների մոտ և մահացել ու թաղվել են Վահանավանքում։ Այս ենթադրության կողմ կարող է հանդիսանալ հիշյալ կաթողիկոսի պատվին կանգնեցված քարե հուշարձանը կրկնահարկ եկեղեցու գավթում։

Սենեքերիմն ունեցել է նաև մի որդի Սնագա անունով, սակայն դրա հավանական է, թե այս տապանաքարը նրանն է։

Սրահի հարավ-արևմտյան մուտքի մոտ հայտնաբերվեց նաև մեկ այլ տապանաքար (երկար. 50 սմ, լայն. 85 սմ), որի վրա միջին մեծության տառերով գրված է՝ Թ[ՎԱԿԱՆՈՒԹԵԱՆՆ ՀԱՅՈՑ] ՇԺ (1061) ԽԱՉԲԱԿ/ՈՐՈՉՎԱՑ։

Պատմիչ Ստ. Օրբելյանի մոտ սրա մասին ոչ մի հիշատակություն չկա[50], թեև կարելի է ենթադրել, որ խաչքարը կարող էր լինել խաչբակյան նշանավոր տոհմի ներկայացուցիչներից մեկը։

---

45 Ստ. Օ ր բ ե լ յ ա ն, էջ 240։

46 Նույն տեղում, էջ 241։

47 Նույն տեղում, էջ 242։

48 Նույն տեղում, էջ 237։

49 Երկրորդ տողի Զ-ի հորիզոնական ստեղը ծառայել է որպես երրորդ տողի «կենակիցն» բառի հապավման նշան։

50 Հասկանալի պատճառներով այդ մասին չէր կարող հիշատակել նաև ավելի վաղ շրջանի պատմիչ Մովսես Կաղանկատվացին։

Մի շարք խաչքարեր են հայտնաբերվել գլխավոր տաճարի հյուսիս-արևմտյան ձորալանջի փլատակների միջից։ Դրանցից մեկը (երկ. 1 մ 10 սմ, լայն. 60 սմ) ունի հետևյալ արձանագրությունը՝ ՉՀԱՅՐ ԵՒԿԱՐԻՍԿՈՊ ՅՈՒՍՈՎ ԵՎ ԻՎԱՆՈՎ, Ի ՔՐԻՍՏՈՍ. ՓՈՒԵԱ Ի ՋԻՇԽՈՂԼՔ, ԹՎՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆՆ ՀԱՅՈՑ ՀԱԶԹ (970)։

Այլ ժամանակի թողնելով խաչքարի արվեստագիտական ջնությունը, լոկ նշենք, որ հայը եղիկարը եղել է Վահանավանքի ավելի քան 100 մարդուց բաղկացած[51] միաբանության անդամներից մեկը։

Նույն վայրում փլատակների մեջ գտնվեց ևս մի խաչքար (երկ. 1 մ 20 սմ, լայն. 60 սմ), որի գծանկարը հրատարակված է՝ ԹՎՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆՆ ՀԱՅՈՑ ՆԵՂ (995) ՁՅԱԿՈԲԻՍԿՈՊ ԻՎԱՆԻՆ ԻՎԱՆԻՆ ԻՎԱՆԻՆԻՆ Ի ՔՐԻՍՏՈՍ,

Հակոբ երեցին, անշուշտ, չպետք է շփոթել Սյունյաց Հակոբ եպիսկոպոսների հետ, որոնցից մեկը 41 տարի վարելով մետրոպոլիտի պաշտոնը[53], վախճանվել է 954 թ.։ Մյուս Հակոբը, որը սպանվում է ցուրարերդցիների ձեռքով նույն 995 թ., նույնպես չէր կարող այս Հակոբը լինել, որովհետև Ցուրի մոտ է զերեզման նորինն[54]։ Մնում է ենթադրել, որ այս Հակոբը եղել է Վահանավանքի միաբանության անդամներից մեկը։

Հայտնաբերվել են նաև այլ արձանագրությունների բեկորներ։

Հուշարձանը մաքրելիս գտնվել են ջնակարած ու անջնարակ տարբեր մշակման ու որակի զուլդզուլի խեցեղեն, որոնք թվագրվում են X—XIV դդ.։

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում գտնված ճարտարապետական մանրամասները (միջին կամարի քարերը, որմնախոյակները, որմնասյուները և այլն)։

Ուշագրավ գյուտերից է նաև այն քարե մոդելը (60×80 սմ), որի վրա քանդակված է գլխավոր գավթի կամարներից մեկը։ Այս փաստը մեկ անգամ ևս ապացուցում է այն իրողությունը, որ նախքան շինարարությունն սկսելը մեր ճարտարապետները ու քարտաշները, գծագրերից բացի, ապագա կառույցի փոքրիկ մոդելը բանդակում էին քարերի վրա և ապա միայն անցնում գործնական աշխատանքի[55]։

ПРЕДВАРИТЕЛЬНЫЕ РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК МОНАСТЫРЯ ВААНАВАНК

Г. М. ГРИГОРЯН

По инициативе и средствами Армянского общества по охране исторических памятников, Кафанская археологическая экспедиция института археологии и этнографии АН Арм. ССР в течение пяти лет проводила раскопки в одном из замечательных архитектурных памятников средневековой Армении—Ваанаванке.

При раскопках обнаружены многочисленные эпиграфические надписи, интересные и своеобразные архитектурные детали, разноцветная керамика и хачкары, имеющие более чем тысячилетний возраст. При очистке колонного зала большого храма найдена строительная надпись Сюникского армянского царя Смбата Второго, где повествуется о том, что со своим братом Григорием в 1046 году они возобновили все три основных сооружения большого храма. Другая надпись двухэтажной церкви-гробницы относится католикосу Агванскому Степаносу, где говорится, что верховный патриарх Агванка, притесненный сельджуками, нашел убежище в монастыре Ваанаванк. Найдены также намогильные плиты с надписями сюникского царя Григория Первого, великого князя Ашота, первостроителя монастыря Ваана и других исторических лиц.

---

51 Սա. Օրբելյան, էջ 174։

52 Գիցը կամ Կիցը այժմյան Ղափանի շրջանի Քիրս գյուղն է, Քյուրուտից (պատմական Քարուտ) վերև, Գեղվաձորում։

53 Ստ. Օրբելյան, էջ 207։

54 Նույն տեղում, էջ 215։

55 Տե՛ս Օ. Խ. Խալաթչյան, Организация строительного дела в средневековой Армении, «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 2—3, էջ 215—216։